ՄԱՆՐ ԳԻՏԵԼԻՔ

ԱՌԱԾ

Ս Ա Ն

ԴՈՒՔ ալ գիտէք մենք ալ՝ որ կան շատ գեղեցիկ մտածմունքներ, շատ հարկաւոր և կարելի առաջարկութիւններ. ամէնքն ալ կը հաւնին անոնց, ամէնքն ալ կը յուսան որ անոնցմով մարդկային ընկերութիւնն և ազգերնիս առաջ կ'երթան։ Բայց ինչո՞ւ չեն յաջողիր աս բաներս։ — Պատճառն աս է, որ սանկ բարի և օգտակար բաներու մէջ ամէն տեղ Ս մտեր է, և Ն դուրս ընկեր է. Ըռէլ բառէն վերուցէք Ս՝ և դրէք Ն, ամէն լաւ բան կը յաջողի։

ՄԱՅՐԱԿԱՆ ԴԱՍ

Հ. Առջի օրը ի՞նչ ստեղծեց Աստուած.

Պ. Առջի օրը ստեղծեց երկինքը, երկիրս ու լոյսը.

Հ. Երկրորդ օրը ի՞նչ ստեղծեց.

Պ. Հաստատութիւնը, այսինքն օդը ու ամպերը։

Հ. Երրորդ օրը ի՞նչ ստեղծեց.

Պ. Ծովը զատեց երկրէս, ու երկրիս վրայ բուսուց ամէն տեսակ խոտեղէն։

Հ. Չորրորդ օրը ի՞նչ ստեղծեց.

Պ. Արևը, լուսինը ու աստղերը։

Հ. Հինգերորդ օրը.

Պ. Ամէն տեսակ թռչուններ ու ձկներ ստեղծեց։

Հ. Վեցերորդ օրը.

Պ. Ամէն տեսակ կենդանիներ որ երկրիս վրայ կ'ապրին, նաև մարդն ալ։

Հ. Եօթներորդ օրը.

Պ. Եօթներորդ օրը դադրեցաւ Աստուած գործելէն, մեզի ալ ապսպրեց որ սուրբ պահենք եօթներորդ օրը, այսինքն կիրակի բռնենք։

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՇԱԿ

ՀԱՅՈՑ պայազատութիւնը, այսինքն քաղաքական իշխանութեան միջոցը՝ իրենց Հայկ նահապետէն մինչև 'ի Լևոն Զ վերջին Թագաւորին Թագաւորութենէն զրկուիլը յամի տեառն 1357, քըշած է իբր 3800 տարի։ Ա յսչափ երկայն միջոցիս մէջ վեց հարստութիւն ունեցեր են, այսինքն վեց իշխանութիւն իրարու յաջորդ, և իբր 160 պայազատք յաջորդաբար։

Ա. Հարստութիւն Հայկազանց, իբր 2100 տարի, որ վերջացաւ 328 տարի Քրիստոսէ առաջ. Պայազատք 60։

Բ. Հարստութիւն Կայենակալաց, իբր 180 տարի, մինչև 'ի 149 տարին Քրիստոսէ առաջ. Պայազատք իբր 10։

Գ. Հարստութիւն Արշակունեաց, 576 տարի, մինչև 'ի 428 տարին Քրիստոսի. Պայազատք 27։

Դ. Հարստութիւն Նախարարաց Հայոց՝ Պարսից կամ Յունաց կամ Հագարացւոց վերակացութեան տակ իբր 450 տարի, մինչև 'ի 884 տարին Քրիստոսի. Պայազատք իբր 25։

Ե. Հարստութիւն Բագրատունեաց, 160 տարի, մինչև 'ի 1045 տարին Քրիստոսի. Պայազատք 10։

Զ. Հարստութիւն Ռուբինեանց, 295 տարի մինչև 'ի 1375 թիւն Քրիստոսի. Պայազատք 25։

Բայց երկրորդ հարստութեան ատեն՝ Հայաստանի մէջ կրկին թագաւորութիւն կար. նոյնպէս երրորդին ատենն ալ 100 տարիի չափ վերին Հայաստանին մէջ իբր 15 զատ թագաւորներ ալ նստած են. նոյնպէս հինգերորդին ատենն ալ՝ Կարսի և Վասպուրականի և Սեբաստիոյ մէջ իբր 13 թագաւոր։

Ցեռ Ռուբինեանց մինչև հիմայ 474 տարուան միջոց՝ 57 կաթողիկոսները սեպելով Պայազատ կամ Ազգապետ, ընդ ամենայն Հայոց պայազատութիւնը կ'ըլլայ իբր 4280 տարի, և 214 ազգապետք, հիմկու Ներսէս Ե կաթողիկոսէն մինչև 'ի Հայկ. Հայկէն ալ վեր մինչև Յադամ նախամարդն՝ 14 ազգ կայ։

ԱՌԱԿ

ՃԱՆՃՆ նստեալ 'ի վերայ յեսանին վասն ՃԵՆՃՈՅ իւղոյն՝ զի կերիցէ. և ասէ յեսանն. Ես յերկաթէն կ'առնում, և դու յինքդ կամիս բաժին առնուլ։

ՀԱՆԵԼՈՒԿ

Լաց՝ Ճանապարհ մի ծանիր
Ոչ ցեխ ունի ոչ փոշի,
Ոչ գոյ 'ի նմա մարդ, նախիր,
Ոչ կառք ոչ սայլ և ոչ ձի.
Բայց դու ընդ այս զարմացիր
Զի Ճանապարհն այն շրջի
Զցայգ և զցերեկ անձանձիր,
Իսկ ուղևորն միշտ հանգչի։

ՄԱՅԻՍԻ ՀԱՆԵԼՈՒԿՆ ԷՐ՝ ՈՂԻՆՁ

ՎԵՆԵՏԻԿ Ի ՏՊԱՐԱՆԻ Ս. ՂԱԶԱՐՈՒ